ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

<< 06 >> դեկտեմբերի 2012թ. N 236

ք. Արմավիր

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՆԵՐՄԱՐԶԱՅԻՆ ԱՎՏՈԲՈՒՍԱՅԻՆ ԵՐԹՈՒՂՈՒ ՄՐՑՈՒՅԹ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.14-րդ կետի <<ա>> ենթակետով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2001 թվականի օգոստոսի 16-ի N762 որոշմամբ հաստատված կարգի 9-րդ կետի 2-րդ ենթակետով և 62-րդ կետով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի ներմարզային կանոնավոր երթուղիների կազմակերպման և անցկացման մրցութային հանձնաժողովի նախագահի 2012 թվականի դեկտեմբերի 3-ի զեկուցագիրը.

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետի 2009 թվականի հոկտեմբերի 26-ի N 145 կարգադրությամբ ստեղծված հանձնաժողովին (Հ. Կուրղինյան)՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով և ժամկետում կազմակերպել ներմարզային <<Վաղարշապատ-Տարոնիկ>> ավտոբուսային երթուղու մրցույթ և արդյունքները ներկայացնել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:
2. Թույլատրել <<Էջմիածնի ԲՈՒԱՏ>> բաց բաժնետիրական ընկերությանը մյուս երթուղիների մրցութով անցած պահուստային ավտոբուսներից մեկով սպասարկելու <<Վաղարշապատ-Տարոնիկ>> երթուղին մինչև նոր մրցույթի կայացումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ ***Ա. ՂԱՀՐԱՄԱՆՅԱՆ***